

Ե. ԶԱՐԵՆՑԸ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅՐԵՆԻ ԿԱՐՍՈՒՄ

ԱՄՐԱՍ ԶԱՔԱՐՅԱՆ

«Զարենց-նամեում» մտաբերվող գրապատմական հիշարժան բանախոսության առաջին շրջանառության մեջ շմտած ճշգրիտ ամսաթիվը՝ 1919 թ. հոկտեմբերի 18, օգնում է լուսաբանելու բանաստեղծի կենսագրության և ստեղծագործության հետաքրքիր հանգամանքներ, այդ թվում հայրենի քաղաքում վերջին անգամ անցկացրած նրա կյանքի օրերը:

Ներկայացնելով իրենց միատեղ ուսուցչությունը Բաշթյադիկլարում, Աբովը գրում է. «Բայց ահա մի օր, երբ Զարենցը հերթական երթևեկումի էր գնացել Կարս... վերադարձավ ոգևորված»:

— Մի տե՛ս... տես ի՞նչ եմ բերել, ի՞նչ...— ու ձեռքում թափահարում էր Երևանի թերթերից մեկը:

Թերթը ընդարձակ հաղորդագրություն էր տպել, թե՛ Զարենցի, որպես մի նո՛ր, տաղանդավո՛ր բանաստեղծի մասին, Երևանում կարդացվել է դասախոսություն և ասվել են շատ ու շատ գովեստներ¹:

Շարունակությունից հետևում է, որ Աբովի մտաբերումով այդ լուրը նրանց հասել է 1920-ի գարնանամուտին: Ակնհայտ շփոթմունք. գարնանամուտին Բաշթյադիկլարում Աբովը, ըստ երևույթին, կարդացել է ընդդեմ այդ բանախոսության մամուլում տպագրված ծավալուն տեսությունը, ինչ վերաբերում է Զարենցին, ապա նա ամենաուշը 1919-ի նոյեմբերի վերջերին արդեն հեռացել էր Բաշթյադիկլարից:

Նախ նկատենք, որ 1919-ի հոկտեմբեր-նոյեմբերին հաղորդակցությունը (մասնավորապես երկաթուղային կապը) Երևանի և Կարսի միջև բավականաչափ կանոնավոր էր, և հոկտեմբերի 10-ից օրեր շարունակ պաշտոնական թերթում զետեղված բանախոսության հայտարարությունը անկարելի է, որ Կարսում Զարենցի ընկերներին հայտնի դարձած չլիներ թեկուզև հոկտեմբերի վերջերին:

Այդ ընթացքում, ինչպես գրում է Աբովը, ինքն ու Զարենցը հերթով «երթևեկել» են Կարս՝ հացի, աշխատավարձի և այլ հոգսերով: Ուրեմն և հավանականն այն է, որ ոչ ուշ, քան նոյեմբերի սկզբներին իր հերթի «երթևեկումից» էլ Զարենցը պետք է որ վերադարձած լիներ այդ թերթերից մեկի կամ բանախոսության մասին հաղորդում զետեղած այլ լրագրի համարներից մեկով, քիչ է ասել՝ ոգևորված ու խանդավառ:

Հենց այդ օրերին էլ վերաբերում է Աբովի մտաբերած խոսակցությունը նրանց միջև. «—Սա գնում եմ Երևան,— ասաց նա վճռականորեն,— դու է՛լ արի...»

— Հապա դպրո՞ցը... Ինչպե՞ս կարող ենք դպրոցը թողնել...

Չափեցինք, ձևեցինք, գտանք, որ անհարմար վիճակում կլինենք հան-

¹ «Հիշողություններ Նիշն Զարենցի մասին», Երևան, 1961, էջ 117 (այսուհետև բնագրում նշվելու է ՀՆԶՄ և ապա էջը):

դեպ Արամ Օլթեցյանի, որ դպրոցը վստահել էր մեզ: Եվ ի՞նչ կմտածեն մեր մասին գյուղացիները» (ՀՆԶՄ, 118):

Ինչպես հայտնի է, Օլթեցյանը Ռեալական դպրոցի Զարենցի ուսուցիչներին էր, այդ ժամանակ Կարսի շրջանի դպրոցների տեսուչը, և, պարզ է, ծանր էր շարաշահել նրա վստահությունը: Եվ սակայն, այդ տեղին նկատառումներով հանդերձ, նորահայտ անհամբեր բանաստեղծին հաջողվում է գյուղում մնալ միայն մի կարճ ժամանակ: «Հերթական աշխատավարձը ստանալու համար Կարս գնացի,— շարունակում է հուշագիրը:— Վերադարձիս գյուղացիները դիմավորեցին ինձ հուզմունքով.— Եղիշե վարժապետը գնաց...» (ՀՆԶՄ, 118):

Մարդկայնորեն հասկանալի այս դրամատիկ միջադեպը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է 1919-ի նոյեմբերի վերջերին: Իրականում խորապես դրամատիկ՝ մասնավորապես նրանով, որ տարիներով բանաստեղծական ճանաչում երազած Զարենցը ոչ թե Բաշբադիկլարից ուղղակի մեկնել էր Երևան, այլ Կարս՝ Երևան գնալու միջոցներ չունենալու պատճառով: Փաստացի ապացույցը «Օրիորդ Աշխենին» բանաստեղծության և նույն Աշխեն Թաթուլյանին նվիրած «Միածանի» ու «Ամբոխների» վրա եղած ընծայագրերի տարեթվերն են՝ «920 15 Կարս»² և ապա տարեթվերով անկասկած հավաստի Թաթուլյանի և Լյուսի Թառայանի վկայությունները:

Առաջինի պատմածով ինքը եղել է Կարսում Զատիկյան եղբայրների բացած «Մի բաժակ թեյ» թեյատան գանձապահը: «Օրիորդ Աշխենին» բանաստեղծության մեջ հղումվող այդ թեյատունը անկասկած այն է, ինչ 1919-ի հոկտեմբերի տվյալներով հիշատակվում է Օլթեցյանի զեկուցագրում. «Ղարսի ուսուցչական միությունը բաց է արել քաղաքում «Մի բաժակ թեյ» թեյատուն, որի ղուտ օգուտը հատկացվելու է չքավոր դպրոցական երեխաների անհետաձգելի կարիքների համար»³: Ահա այդ թեյատունը, Թաթուլյանի մտաբերումով, 1919-ի վերջերին և 1920-ի սկզբներին համարյա ամեն օր՝ Մշտապես տխուր և ընկճված, Զարենցը առանձնացած մի սեղանի ծխել է ու գրել ժամերով, խնդրելով միայն թեյ: Նա պատմում էր, որ ինքը լավ է վերաբերվել աղքատիկ հագուստով և ընկճվածությամբ պարզապես խղճալի երիտասարդ բանաստեղծին և իբրև «անգնահատելի փոխհատուցում» ստացել է այդ բանաստեղծությունն ու գրքերը:

Որոշակիորեն Զարենցը եկել էր Կարս՝ նախ Օլթեցյանի հետ համաձայնեցնելու իր հեռանալը դպրոցից և հետո՝ աշխատավարձ ստանալու կամ ինչ-որ ձևով դրամ հայթայթելու հույսով: Երևանյան բանախոսությանն արդեն տեղյակ Օլթեցյանը, անշուշտ, հեշտությամբ պետք է ընդառաջած լիներ նրա առաջին խնդրանքին: Դժվարը երկրորդն էր, որի համար էլ մեկուկես ամսից ավելի Զարենցը ստիպված մնացել է հայրենի քաղաքում, ըստ երեվոյթին նույն Օլթեցյանի հոգացողությամբ որպես «չքավոր» ուսուցիչ՝ օգտվելով թեյատան քիչ թե շատ տաք անկյունից ու թեյից:

Իր ձեռքի տակ եղած տվյալներով Գ. Անանյանը գրում է, թե Զարենցի «...հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների աշխատավարձը նոյեմբերի վերջերին դեռևս վճարված չէր, այնպես որ նույնիսկ հնարավոր է, որ բանաստեղծ

² Պահպանվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի Ե. Զարենցի ֆոնդում (այսուհետև՝ ԳԱԹ, ԵԶՖ):

³ «Յառաջ», 1919, № 70.

ուսուցիչը իր աշխատանքի համար այդպես էլ վարձատրություն չստանար⁴։

Միանգամայն հավանական ենթադրություն, քանի որ երկրի, առավել ևս վերաբնակեցվող Կարսի շրջանի վիճակը զնալով ավելի ու ավելի էր վատթարանում, և, բնականաբար, խոսք չէր կարող լինել աշխատավարձի մասին։ Դեռ օգոստոսի վերջերին հաղորդվում էր, թե ազգաբնակչության թիվը, ինչպես վկայում է վերջին ցուցակագրությունը, հասնում է մոտ 19—20 հազար բնիկ ժողովրդի և համարյա նույնքան տաճկահայ գաղթականության։

Ժողովրդին մինչ այժմ հաց էր բաժանվում, որից հավասար իրավունքներով օգտվում էին նաև թուրքերը, քրդերը, մալականները և այլն։

Վերջին ժամանակներս հացի բաժանումը դադարել է, հացի պաշարի սպառվելու պատճառով բաժանում են լորի⁵։

Մի ամիս շանցած տազնապով օգնություն էր խնդրվում Կարսի որբանոցի երեխաներին սովամահությունից փրկելու համար։ Իսկ որտեղից հասներ օգնությունը, երբ կարճատև զինադադարից հետո արնաքամ ժողովուրդը նորից էր ներքաշվում հեղբական արհավիրքների երախը, երբ հոկտեմբերի կեսերից նորից են բորբոքվում արյունահեղությունները Շարուր-Նախիջևանում, ապա Նույեմբեր-դեկտեմբերին՝ պատմական Գողթանում։

Արյունալի դեպքեր են տեղի ունենում նաև Կարսի շրջանում՝ խորացնելով երիտասարդ բանաստեղծի տազնապները։ Եվ մինչդեռ դրությունն անելանելի էր բոլոր տեսակետներից, քաղաքի վերնախավը՝ ի դեմս քաղաքագլուխ Նորհատյանի, շահատակող անզուսպ եռանդով շարունակում էր Չարենցի պոեմանման վեպի լեզվով ասած՝ «թող փչել», չգիտես ո՞ւմ աչքերին... Հենց այդ տազնապալի օրերին՝ 1919-ի դեկտեմբերի 22-ին, Կարսից հաղորդվում էր. «Այսօր մեր քաջարի զորքի բանակի տոնի առթիվ կայացած երեկույթին խուռն բազմության կեցցեների տարափի տակ խմում ենք մեր հայրենիքի պաշտպան անձնազոհ բանակի... կենացը, կոչելով՝ կեցցե՝ մեր բանակը, կեցցե՝ Հայաստանի հանրապետությունը և կեցցե՝ պառլամենտը։

«Բանակի օրը» կազմակերպող հանձնաժողովի նախագահ՝ Նորհատյան⁶,

Սրա կողքին նույն փրուն, շահատակող տոնականությամբ հայտնվում էր, թե «բանակի օրը» տեղի է ունեցել զորահանդես, Բերդից տրվել է սալյուտ, ճառեր են ասվել՝ Առաքելոց եկեղեցին ներսից մինչև դրսի հրապարակը լեցուն ժողովրդին, զորքին և սպայակույտին»։ Կարելի է պատկերացնել, թե Առաքելոց եկեղեցու հրապարակում՝ լսելով Նորհատյանին և մյուսներին, սուտ-հաղթական, սուտ-հանդիսավոր բաժակաճառային այդ ոգևորությանը որպիսի նողկանքով է վերաբերվել երիտասարդ Չարենցը, քանի տարբերակով է հայհոյել հայրենիքը շարաշահող-շահատակող մակաբույծներին, որոնց ծնյալ կոչումը վերամբարձ ճառասացությունն էր, մինչդեռ իրականում դրությունն սպառնալից էր, և հայրենիքին պետք էր սթեփ գործ։

Ահա՛ թե ինչպիսի՞ն ստովածքներով և ինչո՞ւ գրվեց «Երկիր Նաիրին», և իր վեպում Չարենցն ինչո՞ւ «դեզերտիրների» համար պատրաստված կախաղանին հանեց այդ պոռոտախոս մակաբույծ Նորհատյան-Մազուլիի Համոյին։

⁴ Գ. Անանյան, Եղիշ Չարենց, Երևան, 1977, էջ 99։

⁵ Ենոր աշխատավոր, 1919, № 189. ստորագրված է Գ. Փորուղյան (հավանաբար հետապնդում գրաքննադատ Գուրգեն Վանանդեցի)։

⁶ «Ցառաչ», 1919, № 75։

Այս պայմաններում անհեղինակի դրույթյամբ նրան կրկին վիճակված էր հայրենի քաղաքում մի կերպ պահպանել իր գոյությունը, մինչև որ Օլթեցյանը կարողանար վարձատրելու հնար գտնել, կամ մտերիմների օգնությամբ, թերևս, հաջողվեր ձեռք գցել մի շնչին գումար:

Բայց 1919-ի վերջերին այդ ամենի հետ միասին հայրենի քաղաքում նրան սպասում էր նաև մի այլ դրամա, որի վերծանումը նույնպես կարևոր է ինչպես կենսագրական, այնպես էլ աշխարհայացքային-ստեղծագործական տեսակետից: Ամենայն հավանականությամբ հենց ղեկտեմբերի սկզբներին քաղաքային ակումբում, «Մի բաժակ թելում» կամ մի այլ վայրում Զարենցը հանդիպում է Լյուսի Թառայանին:

Հայ ճանաչված մտավորականներից Սեդրակ Թառայանի դուստրը՝ Լյուսի Թառայանը, Թիֆլիսի Գայանյան դպրոցի այն շրջանավարտներից էր, որ շատերի հետ Կարս էր եկել՝ արձագանքելով թուրքերից ազատագրված վայրերը աշխատանքի մեկնելու կոչին: Նրա պատմածով Կարսում աշխատել է որպես մեքենագորուհի, միաժամանակ մասնակցել սիրողների խմբի ներկայացումներին: Այդ խմբի հետ էլ առաջին անգամ իր կյանքում հանդես է եկել բեմում՝ կատարելով Սուսանի դերը Շիրվանշահի «Նամուսում»:

Ի հաստատումն Թառայանի պատմածի, Բաբկեն Հարությունյանի վերջերս հրատարակված մեծարժեք աշխատասիրության մեջ կարդում ենք.

«Մայիս 3—31

Հայ թատերասերների «հարիսխ» խմբի ներկայացումները Կարսի ակումբում, ղեկ. Սամվել Բոգեմսկու (Զատիկյան) և Նիդիշ Զարենցի: Խումբը Ա. Աղայան, Լ. Թառայան, Ն. Մսրյան: Խաղացանկ. «Պատվի համար», «Նամուս», «Պաղտասար աղբար», «Կրեյդինսկու հարսանիքը», «Անմեղ մեղավորներ», «Թանկագին համբույր», «Նս մեռա», «Բասմանով» (թարգմ. Ե. Զարենց)»:

7 Բաբկեն Հարությունյան, XIX—XX դարերի հայ թատրոնի տարեգրություն (1801—1922), Կ. Յ. Երևան, 1981, էջ 425: Նույն աշխատասիրության էջերում հարգելի թատերագետը «Մշակի» 1918 թ. հոկտեմբերի 24-ի № 217-ում (էջ 400), հոկտեմբերի 10-ի № 205-ում (էջ 402) և նոյեմբերի 30-ի № 248-ում (էջ 407) Թիֆլիսի դրամաօպերետային խմբի հայկական ակումբում ներկայացրած Շիրվանշահի «Նամուսի», Զուբալովի Ժողտան դրամատիկական խմբակցության ներկայացրած Մ. Գորկու «Հատակումի» և է. Նինշվիլու «Քրիստինեի» բեմադրության առթիվ Ե. Զ. ստորագրությամբ տպված թատերախոսությունները վերծանել է Ե. Զ[արենց]:

Վերծանումը թվում է կասկածելի՝ նախ լեզվաոճական անճկունության ու թափթփվածության առումով, ի դեպ նաև «ըստ հոգի բառավերջի անտեղի սղումով, որն ամենևին բնորոշ չէ Զարենցին»։ Եր մշակված խաղով բեմի վրա կյանք մտցրեց տիկ. Հասմիկ։ Կամ՝ «Անհաջող Լուկա էր Ղուշյան»։ Այս անգամ Գավրուշ տրամադրված չէր Բարխուդարի ոգին շնչեղելու ավելի թափով և այլև։ Վերծանումը կասկածելի է թվում նաև թատերախոսությունների բովանդակության տեսակետից։ Հեղափոխության մկրտությունը ստացած, այլև 1917-ից արդեն ֆուտուրիստական հակումներ ունեցող Զարենցը հազիվ թե Գորկու «Հատակումի» մասին գրեր նման տողեր. «...Մ. Գորկու «Հատակումի» պիեսը, որ իր ժամանակին բավականին աղմուկ էր հանել ռուսական բեմի վրա՝ շնորհիվ, մեր կարծիքով, հեղինակի գրական համբավի, սակայն, լուսնալույս դիմացկուն և ամփոփ սլուծած, կամաց-կամաց սկսեց մթաճել նրա արժեքը, իսկ վերջերս համարյա թե չի էլ բեմադրվում»։

Կամ՝ արդեն նաև «անսլուծած» «Սոմայի» հեղինակ Զարենցը հազիվ թե «Քրիստինեի» առիթով առաջադրեր այսպիսի բարոյախրատական պահանջներ. «...այս դրամայի բեմադրությունը տակավին հեռու է մեր ժողովրդի համար կրթիչ նշանակություն ունենալուց, և մեր կարծիքով, այն պիեսները, որոնք մեծ առիթ են ծառայում բնազդորեն ավելի վայրենանալու թատերական սրահներում, առայժմ պիտի վերացվեն ժողովրդական ռեպրետարից» և այլն։

Անկասկած, հուշագրությունից քաղված այս ուշագրավ տեղեկությունը, սակայն, կարիք ունի որոշ ճշտումներ: Նախ ասենք, որ մայիսին նոր-նոր վերաբնակեցվող Կարսում սիրողների խմբի՝ այն էլ այդպիսի խաղացանկով, ներկայացումները թվում են միանգամայն անհավանական: Ինչպես և վկայում էր Լ. Թառայանը սիրողների խումբը գործել է 1919—1920-ի ձմռանը, ասել է՝ դեկտեմբեր-հունվարին: Ասենք նաև, որ նրա մտաբերումով խումբը ղեկավարել է ոչ թե Բոգեմսկին, այլ հետագայում Գորիսի թատրոնի ռեժիսոր Ա. Աղայանը:

Ինչ վերաբերում է Բոգեմսկու և Չարենցի առնչությանը սիրողների խմբին և անձամբ Լ. Թառայանին, ապա վերջինս պատմում էր հետևյալը. մի օր նրա մոտ են եկել Ս. Զատիկյանը (Բոգեմսկին), Չարենցը և Կարինե Քոթանջյանը: Ասելով թե գալիս է Կիսլովոդսկից և ճանապարհին թափանջել է, Բոգեմսկին խնդրել է «իր օգտին» «Ոճրագործի ընտանիքում» խաղալ էմմայի դերը: Սկսել են փորձերը: Կորրագո խաղացել է Բոգեմսկին, հուշարարը եղել է Չարենցը: Եվ ահա, փորձերից մեկի ժամանակ, ընդհատելով հուշելը, Չարենցը շփոթված, կարկամած հաճոյախոսություններ է ուղղել իրեն, ասելով նաև, թե իրեն սպասվում է հանճարեղ դերասանուհու համբավ և այլն: Հաջորդ օրն արդեն նա գինետանն աղմկել է՝ «Լյուսի՜ Թառայան, Լյուսի՜ Թառայան» գոռալով, որից ինքը վիրավորվել է, խնդրել վերջ տալ այդ ամենին: Ի պատասխան դրան Չարենցը խոստովանել է սեր, Թառայանին կոչել իր մուսան: Դրանից հետո ինքը խուսափել է Չարենցից և փորձերի չի գնացել: Բացատրվելու է եկել Կ. Քոթանջյանը, ասելով թե՝ «բանաստեղծ մարդ է, ինչ վնաս կարող է լինել նրանից»:

Թառայանի մտաբերումով այս դեպքերից մոտ մի ամիս անց Չարենցը և նրա ընկերները հեռացել են Կարսից: Թե երբ են հեռացել վերջինները, դժվար է ասել, բայց արդեն հավաստի կարելի է ասել, որ Չարենցը Կարսից Երևան է մեկնել 1920-ի հունվարի 23—25-ը ընկած երեք օրվա ընթացքում, ուրեմն և Թառայանի հանդեպ բորբոքված նրա սերը վերաբերում է 1919-ի դեկտեմբերին:

Համարյա բառացի արձանագրված այս պատմությունը Թառայանը վերհիշում էր նյարդային շեշտերով, ըստ որում, նույնօրինակ շեշտերով միջամտելով, նրան լրացնում էր քույրը: Բացահայտ էր դժգոհությունը Չարենցից 1919-ի այս, ինչպես և հետագա 1927-ի հանդիպումից Բաքվի թատրոնում: Ի վերջո պարզվեց, որ 1919-ին ինքը նշանված է եղել Կարո Գարագաշի հետ, և որ այդ ընթացքում հեղափոխական ընդհատակյա հանձնարարություններով Կարսում և Սարիղամիշում աշխատելիս է եղել նաև Գարագաշը: Ընդհատակյա որոշ գործերում ներքաշված է եղել և ինքը, որի համար Մայիսյան ապստամբության օրերին Գարագաշի հետ ձերբակալվել է, մայիսի 13-ին արտաքսվել Հայաստանի սահմաններից դուրս: Շրջանցելով պատճառները, ասաց, թե ինքն ու Գարագաշը չեն ամուսնացել:

Թվում է, դժվար չէր գուշակել դրամայի մյուս հանգույցներն ու հետեւյալները: Ըստ երևույթին, նրանց ամուսնությունը խափանվել էր Չարենցի բանավոր ու գրավոր սիրային «հրովարտակաների» մեղքով: Համենայն դեպս, թվում է, դա էր թաքնված Թառայանի հասկանալի դառնության տակ, թեև, կարծում ենք, այդ դառնությունից մի զգալի բաժին պետք է որ հասցեագրված լիներ նրա վաղեմի նշանածի նեղսրտությունը:

Ինչևէ. Թառայանն այդպես էլ չէր ամուսնացել: Բաքվի թատրոնից հետո 1928—1940 թթ. աշխատել էր Ղամարլուի (ներկայիս Արտաշատի) թատրոնում, ապա մինչև 1949 թ.՝ Հոկտեմբերյանի թատրոնում, 1950-ից՝ Հոկտեմբերյանի գրադարանում: 1960-ին Թառայանն արդեն թողակառու էր, ապրում էր քոռջ հետ, և, թեև հասակն առած, պահպանել էր հմայքներ իր վաղեմի տեսք ու պահվածքից. սլացիկ (փոքր-ինչ շոր) հասակ, հավաք կեցվածք, երկարավուն գլուխ՝ ձիգ պարանոցին, խոհուն-նյարդային արտահայտություն, բրոնզյա դույն, ազդու ձայն:

Հ. Թուրշյանի հուշագրերից ևս ենթադրելի է, որ կնոջ՝ Արփենիկի, մահից հետո, 1927-ին Չարենցին Բաքու էր բերել հետաքրքրությունը Թառայանի հանդեպ: Ո՞վ իմանա, զուցե և շմարած հետաքրքրության հետ միասին հանգիստ չի եղել բանաստեղծի խիղճը: Համենայն դեպս, խաղաղ չէր անցել նրանց այս հանդիպումը ևս, և հետաքրքիր է՝ այս հանդիպումն արդեն Թառայանը մտաբերում էր ծայրահեղ վրդովմունքով:

Ծանոթ լինելով բանաստեղծի սիրային պատմություններին ու հոգեբանությանը, հակված ենք կարծելու, որ մանավանդ առաջին դեպքում Թառայանը չի հասկացել Չարենցին, որը բնատուր էություն մը իր սերերը սրբացնող-սրբագործող էր և ոչ երբեք արատավորող: Այստեղից՝ «Նրեք երգից», Աստղիկ Ղոնգախյանից սկսած սեփական սերերը հրովարտակելու նրա սովորությունը, երևույթ, որ համաշխարհային բանաստեղծությանը բնորոշ է բոլոր այն դեպքերում, երբ զգացմունքը վեհ է, սիրո առարկան արժանի հրապարակային պաշտամունքի:

Պատանեկությունից այդպիսին են եղել և Չարենցի սերերը, որոնք ամեն անգամ մարմնավորել-նշանավորել են նրա սրբությունները, խորհրդանշել նրա մուսան, կոշումը, հավատքը, անգամ հայրենիքը: Բանաստեղծի 1919-ի վերջերի և 1920-ի սկզբների երգերում, ապա և «Չարենց-նամեում» այդօրինակ բովանդակություն ունի Լյուսի Թառայան անունը: Այդ անունը իբրև առանձին մի ամբողջ շարքի խորագիր Չարենցի ստեղծագործության մեջ երեւում է 1919-ի վերջերին, և, որովհետև զուգադիպում է նրա բանաստեղծական ճանաչմանը, անմիջապես հանդիպում ենք մամուլում: 1920-ի հունվարի 1-ի «Յառաջի» գրական էջում զետեղված ենք տեսնում «Լյուսի Թառայանին» գրքից խորագրով «Իմ անցած օրերի պես» բանաստեղծությունը: Նույն վերտառությամբ հունվարի 15-ին երգեր է տպում «Հայաստանի կոոպերացիա» երկշաբաթաթերթը («Օրերը հուր են հիմա», «Նոր է կարոտս հիմա...»): Այնուհետև երկշաբաթաթերթի հուլիսի 15-ի համարում տպվում է «Բրոնզե քույր իմ, բրոնզե քույր իմ, բրոնզե հարս» բանաստեղծությունը: Սկզբնապես «Լյուսի Թառայանին» գրքին են պատկանելիս ևղել 1919-ի վերջերին և 1920-ի առաջին կեսին վերաբերող այլ բանաստեղծություններ ևս, բայց արդեն շարքին տրվել է նոր՝ «Բրոնզե գիրք», խորագիրը (այդ երգերը հետագայում մեծապես խմբավորվել են «Ողջակիզվող կրակի»՝ «Առավոտում»):

Այդ երգերում՝ կյանքում Լյուսի Թառայան անուն-ազգանուն ունեցող բանաստեղծի նոր սերը՝ վերակերպվելով ոսկեփայլ հրեղեն դու-ի, պուրպուր աղչկա, հրե ուրուի, բրոնզե քոռջ, բրոնզե հարսի, կրակե կնոջ, Սոմա կնոջ— խորհրդանշում է նրա հեղափոխական մուսան, զուգորդվում-նույնանում և՛ հեղափոխական նոր օրերի, և՛ արնաներկ հայրենիքի, և՛ բանաստեղծի կոշման ու էության հետ: Նույնը տեսնում ենք «Չարենց-նամեի» համապատասխան հատվածներում:

Հավաստելով, որ 1918-ից իր ստեղծագործական կյանքում սկսվում է նոր շրջան, պոեմի XIV գլխում բանաստեղծը կողք-կողքի հիշատակում է Սոմա և Լյուսի Թառայան, հուշելով, որ այդ հիշատակումները հավասարազոր են, ուրեմն և հավասարապես խորհրդանշում են սեփական հեղափոխական մկրտությունը.

... Այսպես էր տասներու թվին:—

Սոմա...

Լյուսի Թառայան...⁸

Եվ ապա XV գլխում փակագծերի մեջ որոշակիորեն բացում է փակագծերը.

(Հոսում է արնակեղ մի գինի,
Հրդեհվում է սրտում իմ շոգ.
Անցնում է իմ թեժ արյունից
Ու քանդում է կապանքը ճնշող:
Նա այնտեղ է—դուրսը, նա կա,
Որպես կին, որպես նո՛ր Նաիրի,
Հարբել են խմբեր խելագար
Ու աշխարհը հանձնել են հրին:
Նա այնտեղ է—Լյուսի Թառայան.
Վարդերում, արևում Շիրազի,
Նաիրյան դաշտերի վրա,
Սկյուծյան դաշտերում անձիր...
Ու բոլո՛ր նրանց սրտերում,
Որ աշխարհը հանձնել են հրին:
Հրդեհվել է աշխարհի հեռուն...)

— Այսպես էր այդ կարմիր տարին...) (ԵԺ, II, 167—168):

Պոեմի XVI գլխում արդեն տարեգիրը պատմում է 1919 թվականի անցքեր.

... Այստեղ էր—19 թվին:

Օ, ինչ հո՛րդ էր տագնապն ուղեղիս...

Ու հոգիս հրդեհին տվի,

Որ լափվի բոցերում դեղին:

Այստեղ էր

19 թվին

Հավաքվել էր Բանակը Կարմիր:

Ու բոլոր աչքերում ծավի

Անսահման խնդություն կար մի (ԵԺ, II, 169),—

⁸ Ե դ ի շ Ե Զ ար Ե ն ց, Երկերի ժողովածու, վեց հատորով, Երևան, 1962—1963, հ. II, 1963, էջ 167 (այսուհետև ԵԺ. հատորը և էջը նշվելու են մեջբերումներին կից):

իսկ վերջում՝

Կանգնել էր նա դռանը
Կարծես—
Խանդավառ՝ ճակատին արև:
Ես երբեք քեզ չեմ մոռանալ—

Թառայան...

Կայարան Տիխոբեցկ (ԵԺ, II, 169—170):

Եվ բոլոր զուգորդություններով Լյուսի Թառայան անունը դարձյալ խորհրդանշում է և՛ նոր հավատք ու սեր, և՛ նոր օրեր, նույնանում հեղափոխության ու հայրենիքի, բանաստեղծի նոր աշխարհազգացողության ու երգի հետ:

Բայց, խորհրդանշական զուգորդությունների հետ միասին, այդ անունը թաքցնում է նաև իրական ճշմարտություն, այն, որ ծանոթության սկզբից Չարենցը տեղյակ է եղել Թառայանի հեղափոխական տրամադրություններին, և որ Լյուսի Թառայան անունը կրող բրոնզե քոշը ինքը որոնել է 1918-ի այն օրերից, երբ իր երակների «Թեժ արյունը» արբել է Սոմայով, խելագարված ամբոխների հրակեզ երթով, իսկ 1919-ին արդեն գտել է՝ «Որպես կին, որպես նոր նաիրի», և այդ պատճառով էլ կողք-կողքի հիշատակվում են Սոմա և Թառայան, Թառայան և կայարան Տիխոբեցկ⁹:

Գ. Աբովի և Աշ. Փալանջյանի վկայությամբ 1919 թ. ամռանը և՛ մեկը, և՛ մյուսը Չարենցի հետ հանդիպել են իրենց պատանեկան ընկերներին, որոնք հեղափոխական ընդհատակյա գործի կազմակերպիչներից էին Կարսում: Փալանջյանը գրում է, թե այդ աշխատանքներին «անուղղակիորեն մասնակցում էինք նաև մենք (ինքն ու Չարենցը—Ալ. Զ.): Օրինակ, Թիֆլիսից երբեմն ստացվում էին բոլշևիկյան անլեզալ թերթեր: Մեր ընկերներից Սամվել Բոգեմսկին, Վռամ Ղազանչյանն ու Վարշամ Բայբուրգյանը ստացված թերթերից մեկ օրինակ տալիս էին, որ կարդանք և վերադարձնենք: Այդ թերթերը հիմնականում տարածվում էին կայազորի զինվորների մեջ» (ՉԵՁմ, 53):

Հայտնի է, որ Կարսի ընդհատակյա կազմակերպությունը՝ ընդարձակելով կապերը Երևանի, Ալեքսանդրապոլի, Սարիղամիշի կազմակերպությունների հետ, ավելի լայն գործունեություն է ծավալում 1919-ի աշնանը: Ըստ որում, կազմակերպությունն այնքան է ուժեղանում, որ «Դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում 1919 թ. սեպտեմբերին հայտնում էր, որ անգլիական ծառայության կապիտան Լեյը

⁹ Չարենցի «Երկրի ժողովածուի» I հատորի ծանոթագրություններից բաղնով այն տողը. ըստ որի բանաստեղծը Թառայանին հանդիպել է «Կարսում 1919 թ. սկզբներին» և ապա ելնելով «Թառայան... Կայարան Տիխոբեցկ» զուգորդությունից, Գ. Անանյանը գրում է, թե՛ «չի բացառվում, որ հանդիպումը տեղի ունեցած լինի Հյուսիսային Կովկասում, բանաստեղծի Թափառումների ժամանակ» (Գ. Անանյան, նշվ. աշխ., էջ 117): Անկասկած բացառվում է, քանի որ Թառայանի վկայությամբ Չարենցին հանդիպել է Կարսում և այդ տարիներին ինքը չի եղել Հյուսիսային Կովկասում: Պարզ է, սակայն, որ հանդիպել է ոչ թե 1919-ի հունվար-փետրվարին, որ սխալ է, այլ դեկտեմբերին:

պահանջում է անհապաղ ձերբակալել Կարսի թուլշեկներին և ուղարկել նրանց Բաթում՝ անգլիական նահանգապետի տրամադրության տակ»¹⁰։

Անշուշտ, Բաշբլադիկլարից Կարս վերադարձած Չարենցը նորից շարունակում էր հանդիպել իր ընկերներին։ Եվ ինչ խոսք, այդ ընկերների հետ շփումներ ունեին նաև Գարաբաշն ու Թառայանը, որի հիմնական աշխատանքի բնույթը Կարսում՝ մեքենագործի, հուշում է, թե նա պետք է որ իր պատմածից ավելի գործուն մասնակցություն ունեցած լինի հեղափոխական ընդհատակյա աշխատանքներին։ Այդ ընկերների միջավայրում էլ, ամենայն հավանականությամբ, մինչև «Ոճրագործի ընտանիքը» ներկայացնելու առաջարկը, Չարենցը որևէ մեկի միջոցով ծանոթացել է Թառայանի հետ, նախապես քաղել նրան վերաբերող տեղեկություններ։

Ինչ վերաբերում է հիշատակված առաջարկին, հակված ենք կարծելու, որ Զատիկյանի առջարկը իրականում եղել է ոչ թե իր, այլ Չարենցի «օգտին»¹¹։ Այդ ճանապարհով նրանք, հավանաբար, ցանկացել են վաստակել դրամ, որպեսզի Չարենցը կարողանա փոքր-ինչ կարգի բերել իր հագուստը և մեկնել Երևան։ Եվ, սակայն, ինչպես հետևում է Թառայանի պատմածներից, ձախողվել է նաև դա, անարձագանք մնացած սիրո տառապանքով բաղմապատկելով նրա այդ ամիսների ցավերը։

Հայրենի «կուրացած» քաղաքի պատճառած դառնությունը գումարովում էր հարազատ չլուսե մարդկանց կարոտը», վիրավորված սիրո տառապանքը, ավերված հայրենական տան մորմոքը, նյութական-հոգեկան անմխիթար կացությունը։

Կարս։

Տասնըիններ թվին։

Տասնըիններ թվի վերջերին։

Նո՛ւյն երկինքն էր՝ կաթսա արևի։

Նույն խշշոցը քշփշան ջրի...

Բայց արևը իզուր էր փորում

Կուրացած աչքերը շենքերի։

Իզո՛ւր էր նաիրյան հեռուն

Ունկնդրում քշփշան ջրին...

Մանկական երազում տեսած

Շուքերի նման չկային

Մանթեներս—լուսե՛ մարդիկ... (ԵԺ, II, 172)։

10 Գ. Բ. Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955, էջ 305։

11 Չարենցին վերաբերող Ս. Զատիկյանի հուշերում, որին ծանոթացել եմ հեղինակի կենդանության օրոք, մեծապես հուշարկվում էին 1921 թ. փետրվարյան խռովության օրերի դեպքեր։ Դժբախտաբար այդտեղ չկար նախորդ տարիների նրանց մտերմությունը հուշող որևէ ակնարկ։

Ս. Զատիկյանին հանդիպել եմ 1960 թ. Երևանում. նրա մտավորական նկարագիրն ու պահվածքը հետաքրքրեց հայացքով, իրոք, տրամադրում են մտածել, որ հանուն ընկերոջ ընդունակ է եղել դիմելու ոչ միայն նման անմեղ, այլև անձնուրաց քայլերի։ Պատահական չէ, որ Չարենցը նրան է նվիրել իր լավագույն բանաստեղծություններից մեկը՝ անհուն զթասրտությունը ալիքավորող ռթամին։

Սրանք բանաստեղծի հուշարկումներն են «Զարեհնց-նամեում», որոնք լիովին համապատասխանում են 1920 թ. հունվարի 15 տարեթիվը կրող «Օրիորդ Աշխենին» բանաստեղծության մեջ արձանագրված մորմոքներին.

Սրտիս թեթև թրթիռների պես հարազատ
Հնչում է միշտ ձայնը քո ջինջ ճիգի թեթև-ում,
Սրտիս թեթև թրթիռների պես հարազատ,
Թռչում է միշտ ձայնը քո ջինջ դեպի հեռուն:

Թռչում է նա դեպի օրերը մանկական,
Դեպի աշխարհը այն կապույտ ու հմայուն,
Ուր երազները ջինջ վճիտ էին այնքան,
Ուր մանկական աչքերն էին կյանքին նայում:

Մութ օրերում կյանքս անցավ, օրս անցավ,
Շուրջս հիմա ոչ մի թեթև թրթիռ չկա,
Բայց մանկանում է սիրտս միշտ, դառնում անցավ,
Երբ ես լսում եմ վճիտ ձայնը աղչկա (ԾԺ, I, 1962, 309):

Նորից և կրկին հուշվում են «մութ օրերը», որոնցում «կապույտ ու հմայուն» մանկությունից հետո անցել է բանաստեղծի կյանքը, և հիմա շուրջը չկա ոչ մի թեթև թրթիռ: Կրկին շարունակվում է խտանալ մութը, որի մոտիվներով հյուսված նրա բանաստեղծություններից՝ ահի ու մահի փսփսացող-քրքջացող սարսուռներով, սեփական տառապանքի ահագնությամբ մի ամբողջ ժողովրդի ահավոր կացություն իմաստավորելու թանձրությամբ առանձնանում է, ամենայն հավանականությամբ, 1919-ի վերջերի այդ «անլույս», «անամոք» օրերին վերաբերող այս բանաստեղծությունը.

Խավար է, գիշեր է: Մթում սպասում եմ:
Սենյակս անլույս է, ու լուռ է գիշերը:
Գիշերը մթի մեջ հոսում ու խոսում է.
Կասկածը ու ահը իմ սիրտը մաշել են:

Լռել եմ: Լռում եմ: Անժայր է գիշերը:
Իսկ մութը մանվում է, մանվում է, մանվում է:
Իսկ սիրտս բռնող այն ահերը հիշել է.
Ահով ու մահով, ախ, լցվել է իմ տունը:

Պոկում են ծերպերը: Մթում քրթմնջում են:
Անտես փսփսում են— ու սիրտս լսում է:
Գաղտնիք է ու ահ է ամեն մի հնչյունը—
Մահո՛ւ պես դժվար է անլույս սպասումը... (ԾԺ, I, 304):

Հանրահայտ «Անքնության» հետ միասին սա հայրենի քաղաքում Զարեհի անցկացրած օրերի ու գիշերների համապատկերն է՝ լի ահի ու մահի տեսիլներով, անլույս սպասումներով:

Դժվար է ասել, թե ցերեկները մեծ մասամբ «Մի բաժակ թեյում» գիշերները որտեղ է անցկացրել նա: Գուցե Զատիկյանի կամ ընկերներից մեկ

ուրիշի հետ նրանց տանը, կամ գուցե առանց հարազատ մեկի, մենակ, հայրենական դատարկ, մութ ու մռայլ հարկի տակ: Չէ որ, ինչպես շատ տարիներ անց մտաբերում էր «Կոմիտաս» պոեմում, 1918-ի տարագրության օրերին, օտար ափերում հիվանդ, մերձիմահ հոր կողքին նա երազներով մշտապես հղել էր հայրենական տանը.

Յո՛ւրտ բակերում ժամերի
Հիվանդ հոր հետ իմ պառկած
Երազել եմ ես մեր հին
Տունն հեռավոր, ինչպես հաց...¹²—

Իսկ այժմ ահա՛, հացի պես երազածը հիշեցնում էր միայն «ահեր», «անծայր» գիշերներին նրա ուղեղում, հոգում մանվում էին «Դանթեական առասպելի» դժոխային տեսիլներ, մանվում էր անամոք կսկիծը անտեր ու անտուն մեռած, օտար հեռուներում թաղված հոր, մեռած, թե՛ կենդանի մյուս հարազատների համար... Չէ որ մեր հեգ Մեծարենցի պես Չարենցը բոլոր բիշնե-րով լուսազգած, լուսապաշտ էր, լուսո խելագար և հիվանդագին շափերով չէր կարողանում տանել մութը, տառացիորեն սարսափում էր բնական, ինչպես և հասարակական մթնոթյունից ու խավարից: Նման հոգեվիճակով էլ, թերևս, Օլթեցյանի կամ մտերիմներից Ջատիկյանի, Քոթանջյանի, գուցե և ուրիշի օգնությամբ ձեռք բերած գրամով փոքր-ինչ կարգի բերելով հագուստ-կապուստը և հոգալով կարսից Երևան ճանապարհածախսը՝ 1920-ի հունվարի կարսյան բքաշունչ մի առավոտ՝ մոտիկ ու հեռու, երևացող ու չերևացող բոլոր կետերից ու կեռամաններից հրաժեշտ տալով հայրենական տանը, ծանոթ փողոցներին, կանգուն ու ավեր շենքերին, Կարսի հարազատ այգուն, գետի քիչչոցին, քարերին ու քարափներին, իր ապրած կյանքին, մտաբերելով հարազատ դեմքեր, անցքեր, ուրախություններ ու տխրություններ, սերեր ու կարոտներ, Չարենցը նոր հույսերով ու սպասումներով հեռանում է Կարսից, թերևս շմտածելով, թե բաժանվում է ընդմիջտ, այնուհետև ամբողջ կյանքում մորմոքելու հայրենի քաղաքի կորուստը, տառապելու հայրենակարոտ-հայրենացավ կոչվող անբուժելի հիվանդությամբ, չիմանալով, որ շատ կարճ ժամանակից դարձյալ վերջին անգամ իր հետ հայրենի քաղաքում հղած պատանեկան ընկերոջը պետք է հասցեագրի այսպիսի տողեր.

Կարսը հիշի՛, Կարսը երբեք չըմոռանաս,
Նայի Վռամ, կյանքում մի՛շտ էլ լոթի մնաս,

<Քեֆն է միակ մխիթարիչ բախտը անանց...>
Կարսը երբե՛ք—ու Չարենցին չըմոռանաս...¹³

¹² ԳԱԹ, ԵԶՖ.

¹³ Նույն տեղում, |

Այս տողերի հասցեատերը՝ Հայրենական պատերազմում զոհված Վառվազանչյանը, փայփայելով հայրենի սուրբ պատկերներ ու հուշեր, ինչ-ինչ հույսեր ու սպասումներ, ինչ խոսք, երբեք էլ չի մոռացել նվիրական Կարսը՝
 Իսկ Զարենցի հայրենացավը ձգվում է մինչև կյանքի վերջին տարիների ստեղծագործությունները՝

Մի՛շտ, երբ կարդում եմ Տերյանը,—Կարսն է հիշում իմ հոգին,
 Իմ մանկութունն ու ալգին հին,—իմ հայրենին ու նաիրյանը.
 Լաց է լինում «մեզմ» հոգին իմ,—դարձն է առնում մորմոքի,—
 Կարսն եմ հիշում հեռավոր,—միշտ, երբ կարդում եմ
 Տերյանը...¹⁴—

մինչև Կոմիտասին նվիրած անավարտ պոեմը, որտեղ երգահանի երգերի, ողբերգական մորմոքների ու մրմուռների հանգերով, շափերով ու ռիթմերով միատեղ տրոփելով թարտում է բանաստեղծի հոշոտող հայրենակարոտ-հայրենացավը...

ПОСЛЕДНИЙ ПРИЕЗД Е. ЧАРЕНЦА В РОДНОЙ КАРС

АЛМАСТ ЗАКАРЯН

Резюме

На основе сопоставления не вошедших в научный оборот фактических данных, воспоминаний и произведений Е. Чаренца прослеживается период жизни поэта в родном городе в конце 1919—начале 1920 гг. В статье основное внимание сосредотачивается на его поэтическом чувстве к Люси Тараян, образ которой в его лирических произведениях и в поэме «Чаренц-наме» символизирует музу новых, революционных песен.

¹⁴ Նույն տեղում: